

■ Ծախումեանցիները վատահ են որ շուտով պիտի վերատիրանան իրենց հողերուն

Առանց հաշուելու Մարտակերտի ու Ասկերանի մէկ փոքր մասը, այսօր Ծախումեանի շրջանը փաստօրէն Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան միակ տարածքն է, որ մնացած է ատրպէյճանական հակազդի տակ: Գարաբաղեան բանակի զինուորական յաջողութիւններէն ետք, մինչ իրենց տունները կը վերադառնան սպտերազմական գոտիէն խոյս տուած բնակիչները, շահումեանցիները կը շարունակեն ապրիլ «Ժամանակաւոր գաղթական»ի գոտարին կեանքով:

1992ի տուեալներով, Ծախումեանի շրջանին մէջ կ'ապրէին շուրջ 12-000 հոգի: Նոյն տարուան յունիսեան բռնագաղթէն ետք, այսօր Հայաստանի մէջ բնակող շահումեանցիներու թիւը մօտաւոր հաշիւներով կը հասնի 9000ի, իսկ մնացեալը ապաստան գտած է Ռուսաստանի զանազան շրջաններուն մէջ: Խօսելով շահումեանցիներու մէկ մասի Հայաստանէն հեռանալու պատճառներուն մասին, Ծախումեանի շրջանային խորհուրդի սպտգամաւոր Յուրի Աւետիսեան ըսաւ, որ գաղթականներուն ուղղուած «հողը ծախելու» եւ «դաւաճան»ի ամբաստանութիւնները շատ ծանր ազդեցին մարդոց վրայ: Սակայն հիմա արդէն միտքերը փոխուած են: «Պէտք է ազատագրել մեր Ծախումեանը եւ վերադառնանք», այս էր այն հիմնական մտածումը, որ կը շեշտուի շահումեանցիներու խօսքին մէջ: Գարաբաղի էլիտերա Բագդեանցի, Էրբէճցի Նիկոլայ Դատեանի, շրջանային կեդրոնէն Սիլվա Յովսէփեանի հետ մեր ունեցած զրոյցի ընթացքին, անոնք «վերադարձ»ի մէջ կը տեսնէին իրենց բոլոր խնդիրներու լուծումը: «Այդ հատուածն է, որ մեզ կենդանի պահեց», ըսաւ Արեգա Բարուրեան՝ նոյնպէս գաղթական: Էլիտերայի որդին՝ Արմէնը գոտուած է ապրիլ 17ի ուղղաթիռի ծանօթ դէպքի ժամանակ, մինչ Սիլվայի 52 տարեկան ամուսինը կը կռուի հայդուկային ռկատին մէջ:

Եւ իսկապէս, կռուողները շատոնց է որ վերադարձան իրենց երկիրը: Ատիկա տեղի ունեցաւ գլխաւորաբար Ծախումեանի վարչական եւ զինուորական ղեկավար Ծահէն Մեղրեանի ջանքերով: Ե. Մեղրեանը ճանչցողները հիացումով խօսին ծանր հարուածէն յետոյ իր ցուցարբերած վճռակաւութեան մասին: Հայաստանի իշխանութիւններու պաշտօնական ներկայացուցիչներուն կողմէ Ծախումեանի անկման

ու անյաջող փորձ:

Վերջերս Եւրոպայի մէջ ֆիւրտ գործիչներու ձերբակալութիւնները, ֆիւրտերու նկատմամբ հալածանքները ֆիւրտ տաւորականութեան վերոյիշեալ ներկայացուցիչներու մեկաբանութեամբ լուրջ եւ տեսական բնոյթ չեն կրնար կրել եւ լուստ դիւանագիտական խաղեր են, որոնք հիմնուած են այդ վիճակներու տնտեսական շահերուն վրայ: Այդ բոլորը ՆԱԹՕի ինչն ներս թուրքիոյ եւ Մ. Նահանգներու ի գործ դրած ճնշումն է հետեւեալն է», ըսաւ Բ. Մատ: Ի հաստատումն այն ոճին, որ Եւրոպայի մէջ ֆիւրտերու նկատմամբ տարուող քրկայի փաղափակաւորութիւնը կարելի չէ հալածանք համարել, ըսեցաւ Գեորգիանի մէջ գործող «Ֆիւրտիստան» լրատւական գործակալութեան Բանի մը օր առաջ ստացուած ն հաղորդագրութիւնը, ըստ որում, «այն բանէն ետք, երբ րմանիոյ ներքին գործոց նախարարութեան կողմէ արդիւնէւ ք ֆիւրտ ընկերներու գործունէութիւնը, նոյնմբեր ին շուրջ 300 քիւրտիստանցիներ որոշած են պաշտպանել տական ընկերութեան Մանհէյմի բաժանմունքի չէնքը: Շէնքի րտիստանցի պահապաններուն վրայ աւելցած են նաեւ մեծ ւով գերմանացիներ, եւ անոնցմէ ոմանք իրենց բնակարանու պատշգամներէն «ազատութիւն Գիւրտիստանին» մադրութեամբ պատտառներ կախած են: Շէնքի պաշտպանները առնացած են ոստիկանութեան կողմէ չէնքի վրայ յարձակն մը պարագային իրենք զիրենք այրել: Յաջորդ օրը քաղապետարանի պատուիրակութիւնը, ծանօթանալով կացուան, նկատի առնելով երկրէն ներս տիրող հանրային կարծիքը, րկանութեան որոշումը ճիշդ չէ համարած եւ որոշած է հարցը դադ ճամբով լուծել»:

Ա. Մարտարի, Բ. Մատի եւ Ե. Աշիլի կարծիքով, համաշրջային հասարակական կարծիքի ճնշման տակ, նաեւ երկրէն ս քրտական շարժումներու զօրացումէն խուսափելու համար, բքիոյ իշխանութիւնները ազատ արձակեցին մօտ 16 օր աջ ձերբակալուած քրտական «Կիւնտէմ» թերթի աշխատանքները: Ի դէպ, վերջին մէկ տարուան ընթացքին Թուրքիոյ մէջ ւնտէմ»ի 16 լրագրողներ սպաննուած են եւ 11 ուրիշներ՝ ակալուած:

Ռուսաստանի մէջ քիւրտերու նկատմամբ վերաբերմունքի ին յայտնուեցաւ այն կարծիքը, որ մինչեւ հիմա այդ հարցով սաստանի կողմէ որեւէ քաղաքական ուղեգիծի զրսեւորում յատուած, որու պատճառը հաւանաբար այն է, որ այդ երկմէջ քրտական համայնքը առայժմ կաղմակերպուած չէ, իսկ կողմէ Ռուսաստանը այսօր զբաղած է իր ներքին հարցերով: Քիւրտ մտաւորականները զրգուիչ համարեցին նաեւ սկան իշխանութիւններու կողմէ տարածուող այն լուրերը, որ Թի ֆիւրտի մէջ կան մեծ թիւով հայեր: «Թուրքիան կ'աշի հակահայ հասարակական կարծիք ստեղծել աշխարհի մէջ արկարեկել հայ եւ քիւրտ ժողովուրդներու ազգային - տարրական պայքարը», ըսին անոնք:

Միւրի ՄԱՍԻՆԻՆԻ
կարպիս Զիւրիւտիչեանի
եւ Անժէլ Եաղնեանի ամուսնու-
նութեան առիթով կը նուիրեն-
րեն:-
Տէր եւ տիկին Զատիկ եւ
Նելլի ձանիկեան «Ազատ
Օր»ի ֆոնտին 5000 տրխ:-

ՓոնսԱՆ ԾՄԱԿԵՊՍԱԿԻ
Աշոտ Ոսկեանի մահուան
առթիւ կը նուիրեն:-
Տէր եւ տիկին Ստեփան եւ
Նորա Նարինեան «Ազատ
Օր»ի ֆոնտին 5000 տրխ:-
Տէր եւ տիկին Սերոբ Սե-
րոբեան Գոգիմիոյ Հ. Մ. Ը.

ՕժԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱՆ
Պրն. Սերգօ ձանիկեան
150-000 տրխ:-
Խաչիկ Շամոյալեան ըն-
տանի 100-000 տրխ:-
Տէր եւ տիկին Գէորգ եւ
Արափ Գոյանեան 100-000
տրխ:-
Տէր եւ տիկին Եղիշէ Եղե-
կիէեան 50-000 տրխ:-
Մ.ին 5000 տրխ:-

Տէր եւ տիկին Պերն Գու-
յումեան Հ. Կ. Խաչի ԶԲԲ
վարչութեան Հայաստանի
զինուորներու օժանդակու-
թեան ծրագրին 20-000 տրխ:-

օրերուն «դաւաճան» որակուած մարտիկ - ղեկավարը զոսւ-
ւեցաւ կիւրտանի անտառներուն վերեւ, ատրպէյճանցիներու
բու զարկած ուղղաթիռին մէջ:

Սակայն հայդուկները մնացած են այդտեղ: Ծախումեանի շրջանային խորհուրդի գործադիր կոմիտէի նախագահ պաշտօնակատար Ծահէն Յովսէփեան, խուսափելով հանդերձ ճշգրիտ թիւեր հրապարակելէ, վերահաստատեց անոնց գոյութեան իրողութիւնը: «Մեր մղած հայդուկային պատերազմը մինչեւ հիմա մէկ խնդիր ունէր՝ թոյլ չտալ, որ Ծախումեանի մէջ ազերիներ բնակին: Այդ խնդիրը կատարուած է» ըսաւ ան, ու ապա աւելցուց, որ այսօրուան խնդիրը արդէն Ծախումեանի ամբողջական ազատագրումն է: Իր կարծիքով այդ դժուար խնդրի լուծումը պէտք չէ ձգել միայն բնիկ շահումեանցի երիտասարդներու ուսերուն, այլ ատոր իրենց մասնակցութիւնը պէտք է բերեն նաեւ հայաստանցի մարտունակ երիտասարդները: Ե. Յովսէփեանը յայտնեց, որ հայդուկները այսօր ներառնուած են Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան պաշտպանութեան համակարգին մէջ եւ ստացած են զօրամասի կարգավիճակ. իսկ որոշ պատասխանատուներու երեւանի մէջ գտնուելու պարագան ան բացառեց համերկրացիներու հետ կապը պահպանելու անհրաժեշտութեամբ:

Ծախումեանցիները լուստեսօրէն տրամադրուած են Արցախի մէջ զինուորական յաջողութիւնները, ատրպէյճանական բանակի ամբողջական բարոյալքումը, սեփական հողերուն վերատիրանալու անզուսպ ցանկութիւնը եւ սեփական ուժին ապաւինելու համոզումը իրական հիմքեր են լուստեսութեան: Ե. Յովսէփեան մեր թղթակցին վստահեցուց, որ «ազատագրութեան օրը հեռու չէ»:

■ Ատրպէյճանը դարձեալ օդուժ կը գործածէ

Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան ուղղման կառի հարաւ - արեւելեան հատուածին վրայ, մօտ 30 քմ երկարութեամբ կը շարունակուին ծանր կռիւները: Ատրպէյճանական բանակը դարաբաղեան դիրքերու վրայ կ'արձակէ ծանր ուսմբեր: Թշնամին կռուի դաշտ իջեցուցած է մեծ քանակութեամբ զինուորական ուժ: Այնուամենայնիւ, անհասար պայքարին մէջ դարաբաղցի մարտիկները յաջողած են թշնամիին մեծ կորուստներ պատճառել եւ զանոնք ետ մղել դէպի իրենց նախկին դիրքերը: Սպանուած են աւելի քան 110 ազերի զինուորներ, փճացած են երկու ծանր հրասայ եւ երկու զինուորական փոխադրակառք: Գարաբաղեան կողմէ զոհուած են 4 եւ վիրաւորուած՝ 9 մարտիկներ:

Հաղրութի դիրքերուն վրայ ծանր ուսմբեր նետած են ատրպէյճանական բանակի զինուորական օդանաւերը: Միաժամանակ օդանաւերը հետախուզական թռիչքներ կատարած են մայրաքաղաք Ստեփանակերտ վերեւ:

■ Չանփար գիւղը կը վերականգնի

Թարթար գետի Առուքեիի վտակի ջուրերը ձմրան պէտք պիտի ըլլան Մարտակերտի շրջանի Զափարի եւ շրջակայ գիւղերու բնակիչներուն: Վերջերս այստեղ հինին տեղը գործի լծուեցաւ գիւղի նոր ջրաղացը: Եինանիւթը եւ սարքաւորումները կողտնտեսութեան միջոցներով ձեռք բերած են գիւղ վերադարձած չափարցիները: Մարտակերտի շրջանի Զափար գիւղը երկու անգամ բռնի տեղահանուելէ ետք այսօր դարձեալ կը չինայ: Հայրենի գիւղ վերադարձած են մօտ 70 ընտանիքներ: Վերստին կը գործէ գիւղի միջնակարգ դպրոցը, ուր կիսատ ձգած ուսումը կը շարունակեն մօտ 55 աշակերտներ:

Կողտնտեսութեան նախագահ Բենիամին Սահակեան «Հայուր»ի թղթակցին յայտնեց հետեւեալը.- «Ընդիմաբար շատ են: Առաջին հերթին վերականգնած ենք անասնապահական ընկերութիւնը: Ձեռք բերած ենք մօտ 200 գոլիս խոշոր եւ 100 մանր եղջերաւոր անասուններ, բնակչութեան որոշ մասը ունի մնայուն աշխատանք: Հոգացած ենք անհրաժեշտ ֆանակութեամբ անասուններու կերը: Ամենէն աւելի մեր գիւղացին կը յուզէ երկտրակա նուրբեան հարցը: Այս օրերուն երկրի ղեկավարութեան աջակցութեամբ ամէն բան կ'ընենք՝ որպէսզի նոր տարի չափարցիները դիմաւորեն լուսաւոր, իրենց վերականգնած օճախներուն մէջ»: